

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ԽԱԲԵՈՒԹՅԱՆ ԿԱՍ
ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ
ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Յուրաքանչյուր քրեաիրավական արգելքի նախատեսում պետք է բխի տվյալ պետության և հասարակության զարգացման շահերից: Ցանկացած հանցակազմ միտված է որոշակի հասարակական հարաբերությունների արդյունավետ քրեաիրավական պաշտպանությանը, և այս համատեքստում կարելի է փաստել, որ հանցակազմի արդյունավետությունը անմիջականորեն պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է հաջողվել վերոնշյալ նպատակի իրագործումը:

Քրեաիրավական նորմը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում կատարված հանցանքի համար, իրենից ներկայացնում է մարդկային մտքի ստեղծագործության արդյունք, և, հետևաբար, այն կրում է խիստ սուբյեկտիվ բնույթ: Նման նորմը կարող է հիմնավոր և արդյունավետ համարվել միմիայն այն պարագայում, եթե դրա բովանդակությունը բխում է սոցիալական արդարության գաղափարից¹:

Հասարակական հարաբերությունները մշտապես զարգանում և փոփոխվում են, ինչի արդյունքում դրանց արդյունավետ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտություն է առաջանում²:

Ընդ որում, անհնարին է այնպիսի քրեաիրավական նորմերի սահմանումը, որոնք ի գործ են մեկընդմիջտ և վերջնականապես պաշտպանելու առկա հասարակական հարաբերությունները, քանզի, ինչպես նշվեց, դրանք դինամիկ են և փոփոխական:

Քրեական իրավունքի տեսության մեջ «արարքի քրեականացման հիմքեր» հասկացության առնչությամբ առկա են տարբեր մոտեցումներ: Միասնական եզրույթի բացակայությունը տեսական բանավեճերի առիթ է հանդիսանում³: Քրեաիրավական գիտության մեջ առկա են բազմաթիվ տեսակետներ՝ կապված այն հանգամանքի հետ,

թե որոնք են արարքի քրեականացման հիմքերը, պայմանները և դրան նպաստող գործոնները: Մի շարք գիտնականների կարծիքով այդպիսիք պետք է համարել արարքի հանրային վտանգավորությունը, տարածվածությունը, դրա քրեականացման դրական և բացասական հետևանքների համաչափությունը, այլ իրավանորմերով տվյալ հասարակական հարաբերությունների արդյունավետ պաշտպանության անհնարիությունը և այլն⁴:

Մեր կարծիքով, արարքի քրեականացման հիմքերը և պայմանները պետք է դիտարկել ոչ թե միասնության մեջ, այլ առանձին վերցրած: Որպես արարքի քրեականացման հիմք պետք է դիտարկել դրա հանրային վտանգավորությունը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցակազմի առնչությամբ պետք է նշել, որ նշված արարքի քրեականացման հիմքը դրա հանրային վտանգավորության բարձր աստիճանն է: Որպես խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմի նախատեսման պայմաններ հանդիսանում են տվյալ արարքի տարածվածությունը, այլ իրավական միջոցներով հանցավոր դրսևորման այս տեսակի վրա ներգործության անարդյունավետությունը:

Հանրային վտանգավորությունն արարքի հատկությունն է՝ վնաս հասցնելու քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին: Խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու դեպքում առաջին հերթին վնասվում են սեփականության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Յուրաքանչյուր պետության արտադրական հարաբերությունների հիմքը կազմում է սեփականությունը (չարժական կամ անշարժ գույքը), որի իրավունքը պատկանում է տարբեր սուբյեկտներին: ՀՀ Սահմանադ-

www.lawinstitute.am

րության հոդված 8-ը սահմանում է. «Հայաստանի հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը»: Ինչպես տեսնում ենք, սեփականության իրավունքը համարվում է մարդու կարևոր և անբախտելի իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 17-ում հռչակվում է. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի տիրապետել գույքին ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր գույքից»: Ելնելով այս ընդհանուր սկզբունքից՝ ՀՀ Սահմանադրության հոդված 31-ն ուղղակի ամրագրում է, որ սեփականությունից կարող է զրկվել միայն դատարանը օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականության իրավունքը հանրության համար առավել վտանգավոր ոտնձգություններից պաշտպանվում է քրեաիրավական միջոցներով, և այս առումով խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը արդարացված է թվում:

Հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, օբյեկտիվ կատեգորիա է: Այն գոյություն ունի մարդու (օրենսդրի) կամքից ու գիտակցությունից անկախ: Արարքը հանրորեն վտանգավոր է ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ մեկը (օրենսդիրը, օրենքը կիրառողը) այդպես է գնահատում այն, այլ այն պատճառով, որ այդ արարքը հակասում է տվյալ հասարակության գոյության պայմաններին, խախտում է հասարակության կենսագործունեության համար անհրաժեշտ հասարակական հարաբերությունները: Օրենսդրի խնդիրը հասարակության մեջ կատարվող արարքների վտանգավորության ճիշտ գնահատումն է և դրա հիման վրա այդ արարքները հանցագործությունների թվին դասելն ու դրանց համար պատիժներ սահմանելը (քրեականացում): Այս տեսակետից, իհարկե, այս կամ այն արարքը հանցավոր ճանաչելը որոշակի իմաստով կախված է օրենսդրի սուբյեկտիվ կամքից: Օրենսդիրն ինքն է իր իրավագիտակցության, հասարակության կենսագործունեության պայմանների գնահատման հիման վրա իրականացնում արարքների քրեականացում: Հնարավոր է, որ օրենսդիրը որոշ դեպքերում սխալ գնահատի այս կամ այն արարքի վտանգավորությունը և հանցագործություն համարի այնպի-

սի արարք, որն իր վտանգավորությամբ չի կարող հանցավոր համարվել, կամ էլ, հակառակը, հանցավոր չհամարի այնպիսի արարք, որն անհրաժեշտ է այդպիսին համարել: Չնայած դրան՝ արարքի վտանգավորությունն առկա է օբյեկտիվորեն: Օրենսդիրը արարքին վտանգավորություն չի հաղորդում: Նա միայն վտանգավոր արարքների շրջանակից առանձնացնում է նրանք, որոնք, իր (օրենսդրի) կարծիքով, առավել վտանգավոր են, և որոնց դեմ անհրաժեշտ է պայքարել քրեաիրավական միջոցներով⁵:

Հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, ունի որակական և քանակական արտահայտություն: Հանրային վտանգավորության որակական արտահայտությունը հանրային վտանգավորության բնույթն է, իսկ քանակականը՝ հանրային վտանգավորության աստիճանը: Հանրային վտանգավորության բնույթը որոշվում է այն հասարակական հարաբերությունների բնույթով, որոնց դեմ ոտնձգություն է հանցագործությունը, այն է՝ հանցագործության օբյեկտով: Զննարկվող հանցատեսակի առումով, ինչպես նշվեց, հանցագործության օբյեկտը սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Հանրային վտանգավորության աստիճանը՝ որպես հանրային վտանգավորության քանակական արտահայտություն, որոշվում է բազմաթիվ չափանիշներով: Հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշն այն վնասն է, որ հասցնում է հանցագործությունը (հանցագործության վտանգավոր հետևանքները, վնասի չափը, բնույթը): Վնասի բնույթն ու չափը հիմք են հանդիսանում հանցագործության վտանգավորության աստիճանը որոշելու համար: Հանրային վտանգավորության մասին խոսելիս հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Հանրային վտանգավորությունը երբեք չի հասկացվում որպես վտանգավորություն բացառապես հասարակության համար: Հանրային վտանգավորությունը նշանակում է վտանգավորություն պետության, հասարակության, անձի համար⁶:

Հանրային վտանգավորությունը հանցագործության կարևորագույն բնութագրական հատկանիշներից է: Նախ չեն կարող հանցագործություն համարվել այն արարքները, որոնք օժտված չեն վտանգավորությամբ: Երկրորդ՝ վտանգավորության աստիճանը այլ իրավախախտումները և հանցագործությունները միմյանցից սահմանագա-

ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ

տող կարևորագույն չափանիշ է հատկապես այն դեպքում, երբ իրավախախտումը և հանցագործությունն ուղղված են միևնույն օբյեկտի դեմ և արտաքին այլ հատկանիշներով նման են իրար: Նման դեպքերում հանցագործությունն այլ իրավախախտումներից տարբերակող հիմնական չափանիշը վտանգավորության աստիճանն է, որը որոշվում է վերը նշված չափանիշներով (վնասի չափ, արարքի կատարման եղանակ, շարժառիթ և այլն):

Սրա հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջանում քննարկել իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք տված այն հարցը, թե արդյո՞ք այլ իրավախախտումներն օժտված են հանրային վտանգավորությամբ:

Որոշ քրեագետներ գտնում են, որ հանրային վտանգավորությունը հատուկ է միայն հանցագործությանը: Աննշան խախտումները, որ հետապնդվում են վարչական, քաղաքացիաիրավական, կարգապահական կարգով, չեն խախտում հասարակական հարաբերությունների ողջ համակարգը և այդ պատճառով չեն կարող հանրորեն վտանգավոր համարվել⁷: Հանրային վտանգավորությունը, ըստ այդ հեղինակների, այնպիսի իրավախախտման հատկություն է, որն էական վնաս է պատճառում կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծում⁸:

Ներկայումս քրեական իրավունքի տեսությունում գերակշռող կարծիքն այն է, որ հանրային վտանգավորությունը հատուկ է բոլոր իրավախախտումներին⁹: Այս տեսակետի կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալ փաստարկներով:

Նախ իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի էությունն այն է, որ նա կարող է կիրառվել միայն հանրորեն նշանակալից երևույթների նկատմամբ: Որքան էլ որ այս կամ այն երևույթն առաջին հայացքից աննշան լինի, քանի որ այն արգելվում է իրավունքով, միևնույն է որոշակի վտանգ է ներկայացնում հասարակության և պետության համար¹⁰: Երկրորդ՝ որոշակի արարքներն իրավախախտում են ճանաչվում այն պատճառով, որ դրանք որոշակի վտանգ են ներկայացնում և կարող են վնաս հասցնել հասարակական հարաբերություններին: Այդ արարքների համար պատասխանատվության սահմանումը բխում է դրանք պարսավելու անհրաժեշտությունից: Հնարավոր չէ պատասխանատվություն սահմանել այնպիսի արարքների համար, որոնք ոչ մի վտանգ չեն ներկայացնում և պարսավանքի արժա-

նի չեն¹¹:

Հանցագործության և մյուս իրավախախտումների տարբերակման խնդրի հետ կապված՝ իրավաբանական գրականության մեջ փորձ է արվել հանրային վտանգավորությունը բաժանել երկու կարգի՝ հանրային վտանգավորություն և հանրային վնասակարություն:

Նման գաղափարը խիստ քննադատության է արժանացել Յու.Ի. Լյապունովի կողմից, որը, մեր կարծիքով, արդարացիորեն գտնում է, որ դա բառախաղ է: Որոշակի տեսակի արարքի՝ հասարակության շահերն այս կամ այն չափով խախտելու օբյեկտիվ հատկությունը չի փոխի իր էությունը՝ անկախ այն բանից, թե ինչպես կանվանվի՝ «վնասակար», թե «վտանգավոր»¹²:

Հարկ է նշել, որ նման տեսական վիճաբանության տեղիք էր տալիս նաև նախկին քրեական օրենսգրքի հոդված 7-ի երկրորդ մասը, որի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում»:

Հարկ է նշել, որ նման ձևակերպում է տալիս նաև Ռուսաստանի Դաշնության՝ 1997 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի հոդված 14-ի երկրորդ մասը:

Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի վերը նշված նորմը միանշանակ չի ընկալվում: Այսպես, 1996 թ. «ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ»-ում նշվում է, որ հասարակական վտանգավորությունը հատուկ է բոլոր իրավախախտումներին: Տարբերությունը միայն վտանգավորության աստիճանի մեջ է¹³: Նման մեկնաբանությունը բոլորովին չի բխում հոդված 14-ի երկրորդ մասի բովանդակությունից, որտեղ ուղղակի նշվում է՝ «... վտանգավորություն չի ներկայացնում ...»:

1996 թ. լույս տեսած ուսումնական ձեռնարկում, որը նվիրված է Ռուսաստանի Դաշնության նոր քրեական օրենսգրքի վերլուծությանը, նշվում է, որ հասարակական (հանրային) վտանգավորությունը հատուկ է միայն հանցագործությանը¹⁴:

Եվս մի հանգամանք: Շատ հաճախ հանցագործության և մյուս իրավախախտումների (օրինակ՝ վարչական իրավախախտման) միջև տարբերությունն աննշան է:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ

www.lawinstitute.am

հանցագործությունը և մյուս իրավախախտումները միմյանցից տարբերվում են հանրային վտանգավորության աստիճանով:

Ինչպես նշում են Ն.Ֆ. Կուզնեցովան և Մ.Ի. Կովալյովը, արարքի հանրային վտանգավորությունը որոշվում է հանցագործության օբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշի միջոցով, ինչպիսին հետևանքն է¹⁵: Յուրաքանչյուր հանցավոր արարք ունի՞նչում է քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերությունների դեմ, այսինքն՝ վնաս է պատճառում դրանց և որոշակի բացասական փոփոխություններ առաջացնում քրեական օրենքով պահպանվող օբյեկտներում: Այդ փոփոխություններն էլ ամենաընդհանուր իմաստով անվանում են հանցավոր հետևանքներ: Հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքները ենթարկվում են որոշակի դասակարգման: Մասնավորապես, հանրորեն վտանգավոր հետևանքները կարող են դասակարգվել հիմնական երկու խմբի՝ նյութական և ոչ նյութական: Բացի դրանից, հանցավոր հետևանքները բաժանվում են նաև փաստական և իրավաբանական, հիմնական և լրացուցիչ (կամ ֆակուլտատիվ), ուղղակի և անուղղակի (կամ անմիջապա) և այլ տեսակների: Նյութական հետևանքներն իրենց հերթին բաժանվում են գույքային բնույթի հետևանքների և քաղաքացիների կյանքին ու առողջությանը վնաս պատճառող հետևանքների: Ինչ վերաբերում է ոչ նյութական հետևանքներին, ապա դրանք արտահայտվում են հիմնարկների և ձեռնարկությունների նորմալ գործունեության կամ հասարակական կարգի խախտման մեջ¹⁶:

Փաստական հետևանքների թվին պետք է դասել հանցագործությամբ առաջացած բոլոր հետևանքները: Իրավաբանական կարող է համարվել փաստական հետևանքների միայն այն մասը, որն իր արտացոլումն է ստացել քրեական օրենսդրությունում: Հիմնական են համարվում հանրորեն վտանգավոր այն հետևանքները, որոնք նշվում են քրեական օրենքում, որոշում են հանրորեն վտանգավոր արարքի տեղը քրեական օրենսգրքի Հատուկ մասի համակարգում: Իսկ լրացուցիչ (ֆակուլտատիվ) են համարվում հիմնականներին լրացնող հանցավոր հետևանքները: Որոշ դեպքերում հանցակազմերը նախատեսում են մի քանի հետևանք, ընդ որում, դրանց մի մասը հանդիսանում է հիմնական, իսկ մյուսը՝ լրացուցիչ:

Խաբեությամբ կամ վստահությունը չարաշա-

հելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը նյութական է, այսինքն հանրորեն վտանգավոր հետևանքները նկարագրված են որպես քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ: Որպես հետևանք նախատեսվում է խոշոր չափերի վնաս պատճառելը, ինչը կարող է դրսևորվել ինչպես իրական գույքային վնասի, այնպես էլ բաց թողնված օգուտի տեսքով:

Քննարկվող հանցագործության բարձր հանրային վտանգավորությունը պայմանավորված է նաև դրա կատարման եղանակների առանձնահատկությամբ, քանզի այս պարագայում հանցավորը բավականաչափ երկար ժամանակահատվածի ընթացում տիրապետում, տնօրինում կամ օգտագործում է ուրիշի գույքը, ինչի հետևանքով պատճառվող վնասի չափն անընդհատ աճում է:

Հարկ է նկատել, որ քննարկվող հանցատեսակի լատենտայնությունը բավականաչափ բարձր է, և շատ դեպքեր մնում են չբացահայտված: Ինչպես նշում է Ն.Վ. Սիչովան, խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու դեպքերի միայն 12 %-ն է բացահայտվում¹⁷: ՀՀ-ում ևս քննարկվող հանցատեսակի լատենտայնությունը խիստ բարձր է, և դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ շատ դեպքերում նմանատիպ հասարակական հարաբերությունները ստանում են քաղաքացիաիրավական կարգավորում, և ծագած խնդիրը չի տեղափոխվում քրեաիրավական ոլորտ: Բացի այդ, տուժողները շատ հաճախ չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված արարքի բարձր հանրային վտանգավորությունը, քանզի, տվյալ հանցատեսակի առանձնահատկություններով պայմանավորված, վնասը հիմնականում դրսևորվում է բաց թողնված օգուտի տեսքով, և դրա չափը տուժողի համար պարզ չէ:

Այսպիսով, խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու քրեականացման հիմքը դրա հանրային վտանգավորության բավականաչափ բարձր աստիճանն է: Ելնելով քննարկվող հանցատեսակի բարձր լատենտայնությունից, ինչպես նաև տվյալ հասարակական հարաբերությունների արդյունավետ քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունից՝ պետք է փաստել, որ նշված հանցակազմի առկայությունը ՀՀ քրեական օրենսգրքում, առկա իրավակարգավորումների պարագայում, հիմնավոր է:

¹ Տե՛ս Փилимонов В.Д. Норма уголовного права. - СПб., 2004. С. 57.

² Տե՛ս Тенляшин П.В. Уголовная ответственность за уклонение от отбывания лишения свободы: монография / Тенляшин П.В. - Красноярск, 2004. С. 7.

³ Տե՛ս Плаксина Т.А. Основания уголовно-правовых норм, уголовно-правового запрета, криминализации: понятие и соотношение / Плаксина Т.А. // Государство и право. 2006. N 5. С. 41-42.

⁴ Տե՛ս Фефелов П.А. Критерии установления уголовной наказуемости деяний. // Советское государство и право. 1970. N 11. С.101-103; Основания уголовно-правового запрета. Криминализация и декриминализация / отв. ред. Кудрявцев В.Н., Яковлев А.М. М., 1982. С. 215-224; Шеслер А.В. Уголовно-правовая политика и ее реализация. Красноярск, 2002. С. 17; Тер-Акопов А.А. Уголовно-правовая политика Российской Федерации. М., 1992. С. 27.

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): խմբ. Վազինյան Գ.Ս.: Եր. ԵՊՀ հրատ., 2012, էջ 77:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 78:

⁷ Տե՛ս Дурманов Н.Д. Обстоятельства, исключают общественную опасность и противоправность деяния. Советское уголовное право. Часть общая. М., 1961. С. 135.

⁸ Տե՛ս Марцев А.И. Диалектика и вопросы теории уголовного права. Красноярск, 1990. С. 30.

⁹ Տե՛ս Ляпунов Ю.И. Общественная опасность деяния как универсальная категория советского уголовного права. М., 1989, Ковалев М. И. Понятие преступления в советском уголовном праве. Свердловск, 1987.

¹⁰ Տե՛ս Ковалев М.И. Советское уголовное право. Введение в уголовное право. Курс лекций, вып. 1. Свердловск, 1971. С. 62.

¹¹ Տե՛ս Курс советского уголовного права. Т. 1, Л., 1968. С. 167.

¹² Տե՛ս Ляпунов Ю.М., նշված աշխ. էջ 29:

¹³ Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации. Общая часть. М., 1996. С. 25.

¹⁴ Տե՛ս Новое уголовное право России. Общая часть. Учебное пособие. М., 1996. С. 41.

¹⁵ Տե՛ս Ковалев М.И. Понятие преступления. Свердловск, 1987. С.77. Տե՛ս նաև Кузнецова Н.Ф. Преступление и преступность. М., 1969. С. 69.

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): խմբ. Վազինյան Գ.Ս.: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 142:

¹⁷ Տե՛ս Сычева Н.В. Причинение имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием. Уголовно-правовой и криминологический аспекты: дисс. ... канд. юрид. наук. Челябинск, 2006. С. 4.

РЕЗЮМЕ

Основания и условия предусмотрения состава преступления по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием в Уголовном кодексе РА

В статье автором были рассмотрены основания и условия предусмотрения состава преступления по причинению имущественного ущерба путем обмана или злоупотребления доверием. Автор обсуждает вопрос криминализации вышеизложенного деяния, и доказывает, что в действующем уголовном кодексе, в условиях существующего правового регулирования, понятие рассматриваемого состава преступления вполне обосновано.

SUMMARY

Basics and conditions of stipulating the composition of the article of infliction of damage to property by fraud or abuse of trust in Criminal code of RA

The article deals with the basics and conditions of stipulating the composition of the article of infliction of damage to property by fraud or abuse of trust in Criminal code of RA. The author discusses the issue of criminalization of the foregoing offensive acts, and substantiates that in the current Criminal code, in the case of existing legal regulation, the concept of formulating the composition of crime in RA Criminal code is justified.